ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը.

Անի Խանաղյան, ՀՀ ֆինանսների նախարարության եկամուտների քաղաքականության և վարչարարության մեթոդաբանության վարչության եկամուտների քաղաքականության և հարկային վարչարարության մեթոդաբանության բաժնի ավագ մասնագետ.

2. Գործուղման վայրը և ժամկետները.

Ք. Հաագա (Նիդերլանդների Թագավորություն), 2024 թվականի հունիսի 23-29-ը:

3. Հրավիրող կողմը.

Նիդերլանդների Թագավորության ֆինանսների նախարարություն.

4. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).

«Պետական ֆինանսների կառավարում /Public Financial Management» թեմայով ամառային դասընթացի նպատակն էր Նիդերլանդների Թագավորության օրինակով քննարկել Պետական ֆինանսների կառավարման ծախսային և եկամտային մասի հարկաբյուջետային քաղաքականությունը, զարգացնել և խորացնել հարկային համակարգին առնչվող հմտությունները, ծանոթանալ և քննարկել Նիդերլանդների Թագավորությունում գործող հիմնական հարկատեսակները, կիրառվող հարկաբյուջետային քաղաքականության հիմնական ուղղությունները, վերջիններիս վերլուծության և կիրառելիության ներկայիս ժամանակակից մեթոդները:

5. Քննարկված թեմաները.

Դասընթացի ընթացքում, մասնավորապես, քննարկվել են հետևյալ թեմաները.

1) Նիդեռլանդների հարկային և մաքսային մարմնի (NTCA) կառուցվածքը, պարտականությունները,

2) Թվային տնտեսություն,

3) Ավելացված արժեքի հարկ, եկամտային հարկ և շահութահարկ,

4) Հարկեր և տեխնոլոգիաներ,

5) Կոռուպցիայի և խարդախության դեմ պայքար,

6) Ռիսկերի կառավարման տեսություն,

7) BEPS Pillar 1 և 2:

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Դասընթացի ընթացքում առանձին հանդիպումներ և ելույթներ նախատեսված չէին:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Դասընթացի ընթացքում որևէ որոշումների ընդունում կամ փաստաթղթի ստորագրում նախատեսված չէր:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Դասընթացի ընթացքում ձեռքբերված գիտելիքները և Նիդերլանդների Թագավորության հարկման համակարգի փորձի ուսումնասիրությունը լայն հնարավորություն ստեղծեցին ծանոթանալու միջազգային լավագույն փորձին, որոշ կարգավորումների մասով քննարկելու դրանք ընթացիկ աշխատանքներում կիրառելու նպատակահարմարության հարցը:

Ստորագրությունը, ամսաթիվը:

02.07.2024թ.